



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ. Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկե-
րութեան հաշիւը. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմ և խաղաղութիւն. Եւրո-
պայում. Երկրաշարժ Ամերիկայում. Արտաքին լու-
րեր. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՊԱ-
ՏԱՍԻԱՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻ պտայտ Լէվէրպուլի աշխար-
հանդիսում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՇՅԻՆ

Այս օրերս հրատարակվեցաւ հայոց Բարեգոր-
ծական ընկերութեան նոյեմբերի 15-ից 1881
—1885 թվ. խորհրդի, դրամական, ելեմտից և
գործունէութեան համառոտ հաշիւը: Հայոց
Բարեգործական ընկերութեան օկղանաւորութիւ-
նը այնպիսի աղմուկ հանեց, նոր նպատակները,
—ըստ կանոնադրութեան,—այնքան լայն և բազ-
մառեսակ են, նրա գործունէութեան ընթացքը
այնպիսի մի ուշադրութեան արժանի ի
պատկեր է ներկայացնում, որ հետաքրքրական է
ծանօթանալ այդ համառոտ հաշիւ բովան-
դակութեան հետ, մանաւանդ որ հէյտ ինքը այդ
հաշիւը շատ պերճախօս է....

Ընկերութեան գործունէութեան արդիւնաւե-
տութիւնը բնականաբար գլխաւոր կախումն ու-
նենալով նրա կողմէն միջոցներից, ասված է յառա-
ջաբան-բացատրութեան մէջ, խորհուրդները միշտ
աշխատել են օրինաւոր և նպատակա-
յարմար միջոցներով դուստրներ հաւաքել: Թէ
ինչ արդիւնքների են հասել նրանք երեք տարեկան
ընթացքում, այսինքն 1881 թվ. նոյեմբերի 15-ից
մինչև 1885 թվ. յունվարի 1-ը, կարելի է տես-
նել հետեւեալից: Ընկերութիւնը ունի մշտական և
գործադիր անդամներ: Առաջին տարեշրջանում
մշտական անդամների թիւը եղել է 31, իսկ գոր-
ծադիր անդամները՝ 589: Յաջորդ 1883 թվ.ին
մշտական եղել են 2, իսկ գործադիր՝ 358: Եր-
րորդ տարին, այն է 1884 թվ.ին մշտական նոր
անդամներ չեն եղել, իսկ գործադիր անդամների
թիւը եղել է 156: Այդպիսով մշտական անդամ-
ների թիւը երեք տարեկան ընթացքում 31-ից իջ-
նում է մինչև զրո, իսկ գործադիր անդամներինը
589-ից մինչև 156: Եւ որովհետեւ ընկերութեան
եկամտի գլխաւոր աղբիւրները մշտական և գոր-
ծադիր անդամների վճարներն են, պարզ է, որ
դրանց թիւի պակասելով կը քանար և եկամու-
տը: Առաջին տարին մշտական անդամների վճա-

րը եղել է 12,200 ռուբլի, իսկ գործադիր ան-
դամներինը՝ 3270: Երկրորդ 1883 թվ.ին մշտական
անդամներից՝ 600 ռուբլի, իսկ գործադիրներից
1,790 ռուբլի: Իսկ 1884 թվ.ին մշտական ան-
դամներ չեն եղել, գործադիր անդամներից էլ
ստացվել է 780 ռուբլի: Բացի դրանցից ընկերու-
թիւնը մուտք է ունեցել երեք տարեկան ընթաց-
քում՝ ա) պարանանդէսներից 1,959 ռ. 64 կ. ք)
պատահական նուէրներ 653 ռ. 10 կ. (պատա-
հական նուէրներ առաջին տարին եղել են 438
ռուբլի, իսկ վերջին տարին՝ 1884 թվ.ին բոլոր-
վին չեն եղել) և գ) տոկոսներ 2,933 ռ. 84 կո-
պէկ: Ընկերութիւնը առաջին տարին ընդհանուր
մուտք ունեցել է՝ 16,917 ռուբլի 24 կ., երկրորդ
տարին՝ 5,203 ռ. 46 կ., երրորդ տարին՝ 2,871
ռ. 25 կոպէկ: Առաջին տարին աւելւում է միւս
լի գումար գոյացել է՝ 12,200 ռուբլի, երկրորդ
տարին՝ 2,000 ռ. և երրորդ տարին՝ 2,500
ռուբլի:

Ընկերութիւնը երեք տարեկան ընթացքում՝ իր
նպատակներին հասնելու համար գումար ծախս
է ունեցել 7,109 ռ. 39 կոպ: Առաջին տարին
ծախս եղել է 2,535 ռ. 4 կ.: Երկրորդ տարին
ընկերութիւնը ծախսել է 2,431 ռ. 2 կ.: (Գաւիթ
ինչպիսիք ինքնաշարժային խորհուրդը մինչև
թիւնը նախաձեռնելու խորհուրդը մինչև
անդամ չէ եղել նախաձեռնելու մէջ....): Երրորդ
տարին ընկերութիւնը ծախսել է 3,158 ռ. 20 կ:
Այդ տարին խորհուրդը անսպասելի կերպով
ոխալի մէջ է ընկել: Նախորդ տարին նախաձե-
ռելով որոշել է մուտք 4,100 ռուբլի, այդ տարին
հարկաւոր է համարել դրան աւելացնել էլ մի հա-
րիւր և այդպիսով նախաձեռնել մէջ մուտքը որո-
շել է 4,100 ռուբլի. բայց... բայց—մուտքը եղել է
մինչև 2,871 ռուբլի 25 կոպէկ....: Հետաքրքրա-
կան է թէ ինչի վրա է ծախսել ընկերութիւնը
այդ գումարները: Ընկերութիւնը 1883 թվ.ին
ունեցել է թուշկ ստացող 37 աշակերտներ որոնց
տուեւ է 990 ռուբլի. 1884 թվ.ին ունեցել է 44
թուշկ ստացող աշակերտներ, որոց տուեւ է
1825 ռուբլի: Երեք տարեկան միասնապէս նը-
պաստ տուել է 33 աշակերտների և աշակեր-
տուհիների 532 ռուբլի: Առաջին տարին նպատ է
տուել 2 դպրոցի՝ 200 ռուբլի: Երկրորդ տարին
—5 դպրոցի՝ 400 ռուբլի: Երրորդ տարին—2
դպրոցի 75 ռուբլի: Առաջին տարին օգնել է բարձ-
րագոյն դպրոցի մի ուսանողի տարւով 75 ռու-
բլի: Երկրորդ տարին նոյնքան: Երրորդ տարին
օգնել է 6 ուսանողի տարւով 200 ռուբլի: Երեք
տարեկան ընթացքում օգնել է 23 թշուառ-
ների, կարօտեալների և պանդուխտների, տարւով

ընդամենը 304 ռուբլի: Այս է ահա բոլոր հաշի-
ւը....: Այդպիսով, ինչպէս պարզ երևում է այդ
բոլորից, ընկերութիւնը պարբերաբար յետա-
դիմել է այդ երեք տարիներ ընթացքում....: Ինչ
է դրա պատճառը: Խորհրդի կարծիքով հետեւեալն
է. «Մի բարեգործական կանոնաւոր ընկերութեան
պահանջը, որ վաղուց զգալի էր հայ հասարակու-
թեան մէջ, իրականութիւն ստանալով, կարծես
առիթմ տուեց վաղուց կուտակված բարեգործական
զգացմունքների բուռն կերպով արտայայտելուն,
վասն որոյ և սկզբում ամեն կողմից (?) թափուե-
ցան առատ նուէրներ: Բայց (չարագիշակ բայց...)»
այդպիսի եկամուտը ընականաբար (?) շուտով իր
ընական (?) ընթացքը պէտք է ստանար և այն-
պէս շարունակուէր, այսինքն, նոր մշտական ան-
դամների թիւը հետզհետէ պէտք է (?) աւելա-
նար: Իսկ գործադիր անդամների թիւը պէտք է
աճէր: Ընկերացող վերին հաշիւներից արդէն
տեսաւ, որ «խորհրդի այդ բացատրութիւնը»
ոխալ է: Գործադիր անդամների թիւն էլ պակա-
սել է, և այն էլ համարեա չորս անգամ: «Մի
բացատրելի (?) ստույգութիւն և անտարբերութիւն
է նշանակում հասարակութեան մէջ»,—ասում է
խորհուրդը.... Բայց միթէ յիշուի, ընկերութեան
փառաւոր սկզբնաւորութիւնը մի ամենապայ-
լուն պատասխան չէ խորհրդի այդ կարծիքներին....
կամ միթէ, յիշուի, հայոց Բարեգործական ընկե-
րութեան երեք տարեկան վարչութիւնները կարծի
են, որ հայ ժողովուրդը ներկայումս կարող է
գիտակցաբար վերաբերվել դէպի այդպիսի
ընկերական հիմնարկութիւն և ինքնաբերաբար
օգնել, նպաստել, աջակցել այդպիսի հաստատու-
թիւններին:

Եթէ կարծել են,—սխալվել են. իսկ եթէ չեն
կաշքէլ (խորհրդների ձեռք առած միջոցներից
երևում է որ չեն կարծել) ապա ինչով է ընկե-
րութեան կարևորութիւնը, անպայման անհրա-
ժեշտութիւնը և եռանդուն յառաջադիմութիւ-
նը չօգտփելի կացութեւ մեր ժողովուրդին: Ինչ
գիտէ մեր ժողովուրդը ընկերութեան մասին....:
«Ընկերութեան օգնութեանը դիմող թշուառները
և կարօտեալները, ասուած է հաշուի մէջ, ամեն
դասակարգից եղել են և են՝ աղւակական աղքա-
տացած տոհմից, ընկած պատուաւոր վաճառ-
կան, գործելու անկարող արհեստաւոր, զգալի
ուսուցիչ, բազմադասակ այրի, անտերունը աշա-
ւանդ պանդուխտ, անխնամ ծերունի, աչքի լոյսից
զրկված օրիորդ և այլն այլն: Քանիք քանիք օրոտ-
մալիկ տեսարանների վկայ են լինում խորհրդի
անդամները թէ մասնաւորապէս և թէ նիստերի
ժամանակ: Գեղեցիկ խօսքեր: Բայց միթէ այդ

գեղեցիկ խօսքերով կարելի էր օգնել այդ բազմա-
տեսակ կարօտեալներին....: Բայց, ասացէք ինդ-
րեւ, քանի գործելու անկարող արհեստաւորի օգ-
նեց ընկերութիւնը. քանի անխնամ ծերունիներ և
հիւանդ պանդուխտներ սփոխանք դստան ընկերու-
թեան նպաստներից: Աշակերտական ապաստարան
չը հիմնվեցաւ, բայց քանի աղքատ և թշուառ ա-
շակերտներ աշակցութիւն ստացան Բարեգործա-
կան ընկերութիւնից: Եւրօպայի և Ռուսաստանի
մեր բազմաթիւ, դառն աղքատութեան տակ ճնշ-
ւող ուսանողներից քանիսը նիւթական պաշտպա-
նութիւն դստան ընկերութիւնից: Այնցեւ աւարի
ուսումնարանների փակվելուց յետոյ, հացի կարօտ
հայ վարժապետներից քանիսը օժանդակութիւն
ստացան ընկերութեան դանձաբանից....: Հայ
պանդուխտները ամեն օր լեցնում են հայոց լրա-
գրի խմբագրատները. նոյնպիսի քանիսն ընկերու-
թիւնը օգնեց հայրենիք վերադառնալու....: Քանի
սան ունի ընկերութիւնը. քանի ուսումնարան ու-
նի ընկերութիւնը նոյն իսկ այն տեղերում, որ-
տեղ հայ լեզուն կորստեան մօտ է....: Իսկ ապա-
տարաններ, աղքատանցներ ի՞նչ չունին....:

Ընկերութիւնը նիւթական միջոցներ չունի,
ասում են ընկերութեան ղեկավարները.—Ո՛ր ըն-
կերութիւնը. հայոց միակ բարեգործական ընկե-
րութիւնը.—Ինչ է պատճառը, ում վրա է ընկ-
նում ընկերութեան այդ ողորմելի, խղճալի դրու-
թեան մեղաւորութիւնը: Թող ներքի մեզ, որ
այդ հարցերի պատասխան տալը թողնում ենք
ընկերութեան ղեկավարներին:

Մնացածը պարզում է ներկայ թէ և համառօտ,
բայց պերճախօս հաշիւ....:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵԹԻՑ մեզ գրում են որ մի քանի
օր առաջ Նիւսալիտայովի նահանգում անյայտ չա-
րագործների սպանել են նոր-բայալէթի երկուս-
տարդ Յովհաննէս Ափրիկեանցին: Նրա սպանու-
թիւնը, ինչպէս հայտնի է թղթակիցը, մեծ
ցաւ պատճառեց ամբողջ Նոր-Բայալէթ քաղա-
քին: Հետախուզութիւնից երեսց որ Ափրիկեան-
ցին մի քանի գնտակներ են խլել և կարծում
են որ այդ սպանութիւնը աւաղակների գործը
չէ, այլ հանդուգնալի անձնական թշնամիների
գործն է: Քննութիւնը սկսելու համար սպասում են
սպանվածի ճանապարհի ընկերներին և լսվում է
որ մի քանի քուրդեր կաղակներով բերվում են
Նոր-Բայալէթ:

վերջապէս այստեղ ամեն առարկայ երևում է
վիհ, թէ և հաւանական անկատարութեան մէջ:
Մեքենաներից իւրաքանչիւրը շարժման մէջ է,
կատարելով իր յատուկ գործը՝ մանուկ են, հիւ-
սում են, կերտում են, տրուում են, գլխարկագոր-
ծում են և այլն. և իւրաքանչիւր մեքենայ ցուց-
նում է իր ամբողջ գործը մէկ կամ անելի երկու
գործաւորութիւնների հակողութեան տակ: Յիշատա-
կարան բանալու հարկ չը կայ, քանի որ ամեն
տեղ պատրաստ են սպառ ծանօթութիւններ, ո-
րոնցից այցելուն կարող է ստանալ մանրամասն
տեղեկութիւններ: Բոլոր մասերից սուել բազմա-
մարդը, բազմաշիկիւն, բազմամանուկը, ուստի և
բազմադարձիւն է միջազգային բաժանմունքն.
այստեղ առարկաները միակերպ չեն և ոչ էլ միա-
կերպ է դասաւորութիւնը. այստեղ աւելի վաճա-
րում են, գնում են, ուտում են, երգում են, ծի-
ծաղում են, քան թէ միայն նայում ու սքանչա-
նում: Չանաղան լեզուի բառեր խառն ի խառն
լիւռում են այս և այն կողմից. այցելուն չուա-
րում է՝ չը գիտէ հեր նայել: Ահագին տառերով
գրուած «America», «Germania», «Russia» և այլն
բառերը ցուցնում են այս ինչ մասի որ երկրի
պատկանելը:

Բնական է, որ ուսաստանցի մարդուն պէտք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊՏՈՑ ԼԻՎԵՐՊՈՒԼԻ ԱՇԽԱՐՀԱՀԱՆՆԻՒՄ

Մայիսի սկզբից տեղոյ օրագրերը սկսեցին
զբաղեցնել ընթերցասէր հասարակութիւնը զանա-
զան գրուածներով, որոնք վերաբերում էին գլխա-
ւորապէս Լիվերպուլի աշխարհահանգիսի վառա-
ւոր բացման, որը պէտք է տեղի ունենայ մայի-
սի 11-ին ներկայութեամբ Անգլիայի թագուհոյն:
Արդէն կարծւում էր թէ թագուհու անունը բա-
ւական կը լինի զրաւելու հետաքրքիր հասարա-
կութեան ուշադրութիւնը դէպի Լիվերպուլ, որ
համարեա Մէրզի գետնափոր երկաթուղիի բաց-
ման հանդիսից ի վեր հասարակական կեանքի մի
նշանաւոր դէպք չէր հանդիպել: Եւ յիշուի չը-
նայելով Լիվերպուլի սովորական տխուր և մառախ-
լային եղանակին, հանդիսի բացման օրը լսեցինք
թէ անագին բազմութիւն էր սպասում ընդունել
թագուհուն: Թէ և այդ օրը նշանաւոր էր Լիվեր-
պուլցիների համար, սակայն աշխարհահանգէսը

դեռ անխտար էր և այժմ հազիւ թէ պատ-
րաստ է:

Աշխարհահանգէսը կանգնած է քաղաքից դուրս
մի հարթ և շատ յարմարաւոր հողի վրա, ուր
հասնելը կենսաբանական կայարանից տեւում է ըը-
սան լուպէրներ, եթէ այցելուն նստի այս դէպքի
համար մասնաւորապէս պատրաստված կառքի
մէջ: Այս կառքերն այցելուների դիւրութեան
համար շատ արժան գնով տանում են մինչև նը-
շանակաւ տեղը, իսկ եթէ այցելուն գնէ աշխար-
հահանգիսի տոմսակն իր նստած կառքում, ուր
սովորաբար պատրաստի պահում են տոմսակներ,
այն ժամանակ կառքի համար վճարելու պարտա-
ւոր չէ: Երկաթուղիներն ևս զիջած են կիսով ի-
րանց տոմսակների գներին, այնպէս որ Մանչեստ-
րից մինչև Լիվերպուլ (45 արժէ) գնալն և մի և
նոյն օրը վերադառնալն արժէ երկու ու կէս
շիլլինգ: Հանգիսին համար պատրաստված է ա-
տաղձաշէն մի գեղեցիկ շինութիւն, որի գոտող
ճակատը փայլում է մի եռանկյունաձև խողովակի
զարդային բազմաշէնայ լուսով: Շինութիւնը բաժան-
ված է առանձին մասերի, որոնց մէջ առաջին ան-
գամ այցելուն ենթակայ է հեռութեամբ սխալվե-
լու: Առհասարակ իւրաքանչիւր բաժանմունք քաղցր
տպաւորութիւն է գործում և առարկաների բազ-

որ պետութիւններու շարունակութիւնն է մի մը չ-տակաւն, թէն խոշոր պատերազմը:

Եւ զանազանութիւնն այն է միայն, որ մարդկանց կեանքները չեն զոհուում այդ խոշոր պատերազմի ժամանակ, բայց այնու ամենայնիւ «դիւ-նաւոր» խաղաղութիւնը ներկայանում է մեր առջև, որպէս վերին աստիճանի աւերող, թէ-ն խոշոր, դիմակաւորութեամբ մի մշտական պատե-րազմ:

ՆԵՐԿՐԱՇԱՐԺ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Մի կողմից խօսքերն, միւս կողմից երկրա-շարժները սարսափ են գցում երկրի զանազան կողմերի վրա: Յունաստանի երկրաշարժի հետ միասին Ամերիկան ենթարկվեցաւ երկրաշարժի: Երկրաշարժի տարածվելը աղէտներն է: Հիւսիսային Ամերի-կան մի քանի ուղղութեամբ ենթարկվեցաւ մի քանի օրեր տևող ստորերկրեայ զարկերի, որոնք սկսվեցան օգոստոսի 15-ին, և իրանց գնդակն հասան Նոյն ամսի 19-ին: Գլխաւոր զարկերի կենտրոնը Չարլստոն քաղաքի շրջակայքն էին, և երկրաշարժը տարածվեցաւ Մօնթիլից սկսած մինչ-ժամ Տօրոնտօ, և Ատլանտիկ օվկիանոսի մինչև Օմագի արևմտեան կողմում: Այդ տարածութիւնը Ֆրանսիայից ութ անգամ մեծ է: Չարկերը նկա-տելի եղան վաշխագոյնում և մասամբ Նիւ-Սօր-կում, բայց երկրաշարժից վնասվեցան գլխաւորա-պէս հետեւեալ քաղաքները՝ Չարլստոն, Ալպանտա, Սպլանտա, Ռիչմոնդ, Րալֆ և այլն: Այդ տեղե-րում ժողովուրդը յուսահատութեան մէջ է, մա-նաւանդ նեղիները: Նեղիները անպատմելի եր-կրկնի են ենթարկված: Նորա փողոցներում խնդ-րովքն աղօթում, երկրաշարժի շնորհիւ են մատու-ցանում, և չնորս խնդրում երկնքից: Նոյն քաղա-քիցները բացառում էին, թէ աշխարհիս վերջը հասել է, և նեղիները ամենամեծը ինքնուր իրանց մեղքերը խոստովանում և թողու-թիւն էին խնդրում: Բաշխում, հինգ այն միջոցին երբ նեղիները այդ յուսահատ գրութեան մէջ էին, մի քանի երիտասարդ-որսորդներ վերադառնալով սկսեցին խիստ իրանց թմբուկներին: Նեղիները միարժեք անկեղծի աղաղակել: «Հասնել է վերջին դատաստանը, հրեշտակները հնչեցնում են իրանց փողերը...» Ժողովուրդն ամբողջ դասակարգի տգիտութիւնը միացած ճնտքեան արհաւիրանքի հետ ծանր դրութեան մէջ է դրել ամբողջ աղգա-քնակութիւնը: Չարլստոնի, այդ նշանաւոր և գե-ղեցիկ քաղաքի մեծ մասը անկման է: Շատերը զոհ գնացին անհրի փրկատաններին, վիրաւորված-ներին չափ չը կայ: Նիւթիկան միջոցը 5 միլիոն դոլարից ավելի է: Շատ տեղ գետներ պատուվել է, և գետնի միջից բղկում է տաք ջուր, և այլ նիւթիկի հալումը: 50,000 բնակիչ ունեցող Չարլստոնում համարեա երկու հարիւր տուն հա-զիւ է մնացել անվնաս:

Այդ ընդհանուր թշուառութեան ժամանակ, ամեն տեղ համարեա կազմվում են յանձնաժո-ղովներ վնասվածներին օգնելու համար:

Գիտնականները մանրամասն հետազոտութիւն-ները հիման վրայ յայտ են տալիս աղգաքնակու-թեանը որ վտանգը անցել է:

Վերջին երկրաշարժը ամենից մեծը և սաստիկն է այն երկրաշարժներից, որոնց Ամերիկայում յի-շում են: Միմիայն 1885 թվ. ընթացքում եղել է 61 երկրաշարժ: Վերջին տարւում և երկու տարվայ ընթացքում, այսինքն 1872—1885 թվ. Միա-ցեալ Նահանգներում և Կանադայում եղել է 364 երկրաշարժ, որոնց մեծ մասը, բարեբաղդաբար, առանց վնասի անցան: Գիտար թէ վերջին երկ-րաշարժի տպաւորութիւնը շուտով ջնջվի ժողո-վրդեան յիշողութիւնից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական համայնքների ժողովի սեպտեմբերի 8-ի նիստը շատ բաղամարդ է աղմկալի էր: Այդ օրը պիտի կարգացվէր Պարնելի օրինա-գիծը: Ներկայ էին և շատ օտար պետութիւննե-րի ներկայացուցիչներ: Երբ Գլխաւորն մտաւ դահ-լիճը՝ արմատականները և պարնելականները նրան հանդիսաւոր ցոյցեր արեցին: Երբ խօսքը եկաւ այդ օրինադրին, Պարնելը իր ճառի վերջումը ասաց. «Երբանային մինչև զաւ տարի պատմել չէ կարող: Հարկաւոր է շատ շուտով դեղ անել, փոխանակ գնեւորներ և զօրք ուղարկելու այն-տեղ»:

—Անգլիայում էլ ցանկութիւն են յայտնում վիկտորիա թագուհու առաջիկայ յօրեւանի ա-

ռիթմով հիմնել մշտական ցուցահանդէս-ներ, ինչպէս այդ վճռել են անել Ամերիկայում: —«Nord»-ին գրում են Պետերբուրգից հետեւալը բողբալական խնդրի առիթով. «Նախ քան մի որոշ դիւր ընենք, պէտք է ուսումնասիրել խնդիրը հիմնովին. պէտք է ճանաչել այն հողը, որի վրա պէտք է կանգնի Ռուսաստանը: Մենք գտնվում ենք բողբալական կրիդիսի լուծման շրջանում, և հիմք կայ կարծելու, որ շատ բան Ռուսաստանի օգտին չի լինի»:

—Սեպտեմբերի 6-ին, Նիւյորքիայի Նոր փոխ-արքան մարկիզ Լոնդոնցի մտաւ Գուլբին, իր կնոջ հետ միասին: Պաշտօնական հիմնարկութիւն-ները զարդարված էին դրոշակներով: Բողբա-լականները մի խումբ համակրութեան ցոյցեր արեց: Ամբոխը շվացնում և դժգոհութեան ցոյցեր էր ա-նում հանդիսաւոր գնացքի ամբողջ ժամանակը: Բայց և այնպէս ուրիշ խառնակութիւններ տեղի չունեցան:

—Քիւրմայից հաղորդում են, որ խօսքերն սար-սափելի մեծ քանակութեամբ զոհեր է տանում անգլիական զօրքերից: Այնտեղ ուղարկված անգ-լիական տան բժշկաներից ութը իրանք հիւանդա-ցան:

—Աւստրիական լրագիրները հաղորդում են, որ Տիսսա շուտով բացատրութիւններ կը տալ ունգարական պատգամաւորների ժողովին բողբա-րական հարցի առիթով: Սպասում են, որ այդ բացատրութիւնը կը պարզի այն բոլորը, ինչ որ եղել է Գաշտինի, Կիսինգէնի և Ֆրանցֆերտի տեսակցութիւնների միջոցին:

—Դոնգոլայում ներկայումս տեղացիների մէջ մեծ յուզումն է կայ, և արդէն կենտրոնանում են այնտեղ արքա—հայրենասերները:

—Պոլսից հաղորդում են հետեւալը. «Բ. Գուլ-վան է գրաւել Արևելեան-Ռումելիան, ինչի Ռու-սաստանը կը գրաւէ Բալքանիան վերսի-փաշան Աղրիանայի զօրքերի զիջաւոր հրամանատարը, այդ մասին, ինչպէս հաղորդում են լրագիրները, ներկայացրել է մի ծրագիր»:

—«Nene Freie Presse» լրագիրն Պոլսից գե-րում են հետեւալը: «Անաստիայում ներկայումս լինում են պատերազմական պարտաստութիւններ: Էրզրումը բռնացվում է թիւրքաց ծառայութեան մէջ գտնվող մի գերմանացի գնեւորալ ծրագիր-ներով»:

—Հիմնադրողը կենտրոնացվում է Էրզրու-մում: Փոքր-Ասիայում երկաթուղի չինելու համար արդէն հրաւիրված է Պոլսի ինժեներ Պրիստի, իբրև արտասահմանի դրամատեքերի ներկայացու-ցիչ»:

—«Standard»-ի խօսքերով Բ. Գուլ-վան գիտել է Ֆրէյսինգին իմանալու, թէ արդե՞ք Ֆրանսիան պարտաւորվում է զօրք չուղարկել Նեպոլտոն, ինչի Անգլիան դուրս տանի իր զօրքը Նեպոլտոնից: Ֆրէյսինգն դրական պատասխան է տուել:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բժիշկ Բուրգովը Նորբերում հրատարակեց մի շարադրութիւն, որի մէջ ուղում է պարզել, թէ ինչ պէտք է անել երկար ապրելու համար: Բժիշկի կարծիքով, ապրելու համար պէտք է հետեւել իր խորհրդին: Նրա խորհրդով երկար ապրելու մի-ջոցը աղ զօրածանն է: Բժիշկի կարծիքով առող-ջութիւնը լաւ կազմածքից չէ կախված. մարդու կենսաբ. ղեկավարող օրէնքները անհրաժեշտ կա-նոնաւոր են, և պէտք է հոգալ միայն, որ նրանք միշտ անձին Բժիշկի թէօրիայով աղը մի զօրքը միջոց է երկար ապրելու համար, արհիւք թանձր է, աղը կարող է կարգի բերել, երբ արհիւք շատ հեղուկ է, էլի աղը կարող է կանոնաւորել: Բուր-գովը իր միտքը ապացուցանելու համար օրի-նական է բերում: Հօլանդիայում, հին ժամա-նակ, զինուորական ամենամեծ պատմող այն էր, որ նրանց առանց աղի հաց կը տային: Սպե-սոնիայում, անցեալ դարու վերջերս սարսափե-լի տարափոխիկ հիւանդութիւն կար աղի պակա-սութեան պատճառով: Նոյն բժիշկի կարծիքով, աղը ամենազօրեղ միջոց է թոքախտի և խօսե-րայի դէմ: Իւրաքանչիւր հասակ առած մարդ պէտք է զօրածնի օրեկան 2/3 շունջի աղ: Բուր-գով վերջումը յայտնում է, որ եթէ մարդիկ ըս-կախին այնպէս աղ զօրածնել, այն ժամանակ հա-րիւրամեայ ժեներները Նոյնքան շատ կը լինէին, որքան և Նոյնածինները:

Բժիշկ Մէրկել Բերլինի անդամատան Ժո-ղովում կարգաց մի գեկուցում, որով ապացուցա-նում էր որ մարդու հասակը երեկոյեան և առաւօտեան մի և նոյնը չէ միտում: Մէր-կելը, ճիշտ չափերով և թելով, այն և փորձե-ր անելով Նոյն իսկ իր անձի վրա, ցոյց էր տալիս, որ երեկոյեան երբ ինքը պառկում էր քնելու և հաստաւան՝ երբ դարձնում էր, իր հասակի մէջ 5 սանտիմէր դանդաղանութիւն կար: Երեկոյեան աւելի կարճ է լինում մարդու, քան առաւօտը՝ ըստ Մէրկելի:

Նորբերում Աւստրալիայում գտել են առհե-տակաւ անձր և առաջ բերելու միջոցը երաշ-տութեան ժամանակ: Վաղուց ապացուցված է այն բանը, որ երկար ժամանակ, շարունակաբար թնդանօթ արձակելիս, միջնորդի վերին շերտերի մէջ առաջ է գալիս փոփոխութիւն,—երկինքը ծածկվում է ամպերով, և սկսում է անձր քալ: Ուրեմն հարկաւոր էր միայն բռնկող նիւթերի մի-րիւ օդի վերին մասերում, անձրն ստանալու հա-մար,—և այդ միջոցը այժմ գտնված է: Այդ մի-ջոցը շատ հասարակ և պարզ է. օգտագործելի մի-ջոցով բարձրացվում է դէպի վերին շերտերը մի յայտնի քանակութեամբ դիմաւոր: Գիտնական-այնտեղ բռնկվում է, որից առաջ է գալիս միջո-րդի զօրեղ շարժում, օդի մէջ պարունակվող ջրային գոլորչները խտանում են, և առաջ է գալիս անձրն: Այդ առիթով եղած փորձերը, ինչպէս հաստատում են, բաւարար հետեւանքի են հասցրել:

Օգէստայի բժիշկների ընկերութիւնը Նորբերում հրատարակեց բժիշկ Գիւրիլիսովի հետաքրքիր աշ-խատեցում, որը վերաբերում է Օգէստայում մեռնողների քանակութեան և ուրիշ մանրամաս-նութիւններին վերջին երեք տարվայ ընթաց-քում: Օգէստայի բնակիչների թիւը 1880 թվ. հաշվով է 197,262: Իւրաքանչիւր տարի Օգէստա-յում մեռնում են մինչև 7 հազար մարդ, որոնց հազարի վրա գալիս է 35 մեռնող: Փաղաքի կեդ-րոտ, վատ մասերում մեռնողները աւելի են, զլիստայից աղքատ գաղաւթագիրքից: Փաղաքի լաւ մասում մեռնողները կարճում են հազարին 15, իսկ վատ մասում հազարին—54: Երեւանե-րի մէջ մահվան դէպքերը աւելի շատ են: Հասա-կաւորները Օգէստայում մեռնում են զլիստաւոր-պէս թոքախտից (հարիւրին 24-ը): Վերջին երեք տարվայ ընթացքում կանաչ աւելի քան մե-ռել, քան տղամարդիկ: Բժիշկական օգնութեան դիմելու սովորութիւնը չէ տարածված բժիշկների մէջ: Փաղաքի ամենահարուստ մասի մէջ մեռ-նողները հարիւրին 40-ը բժիշկի երես չէ տեա-նում, իսկ քաղաքի աղքատ մասում մեռնողներից հարիւրից 94-ը բժիշկական օգնութեան չէ դի-մում: Փաղաքի առողջապահական պայմանները լաւանալը ցոյց է տալիս իր օգտաւէտութիւնը:

Շուտով Պետերբուրգում բացվելու է հին-մար-կաներ վաճառող բիւրօ, որը պատկանում է Գրեդ-գինի ընկերութեան անդամ Կրիլենգին: Բիւ-րօն ունի 100,000 զանազան ժամանակների և դանդաղ երկրների հին մարկաներ: Պետերբուր-գում 200-ից ավելի մարդիկ կան, որոնց մարկա-ների ժողովածուները հազարներ արժեն:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 19 սեպտեմբեր: Այսօր առա-ւօտ Նոյն կայսերական Մեծութիւնները բարե-հաճեցին վերադառնալ Պետերգօֆ:

Պետեր, 19 սեպտեմբեր: Միմիայն-նախագահ Տիսսա երէկ յայտնեց սեյմին, որ բողբալական զօրքերի վերաբերութեամբ աւստրիական քաղաքա-կանութեան հիմք ծառայում է Բերլինի դաշնա-գրի պահպանութեան սկզբունքը: Աւստրո-Ունգա-րական կառավարութիւնը ցանկանում է, որ Բալ-կանեան պետութիւնները միան անկախ, այդ պատ-ճառով չի թոյլ տայ, ոչ օտար հովանաւորութեան հաստատելը այդ պետութիւններից մէկի վրա, և ոչ էլ միակողմանի կերպով խառնուրդ բաղա-նեան զօրքերի մէջ: Այս բոլոր հարցերը, որոնք վերաբերում են Բալկանեան թերակղզու վրա ծագած տարաձայնութիւններին, պէտք է ենթար-կուին Տիսսայի կարծիքով, այն բոլոր պետութիւն-ների ընդհանուր վճռին, որոնք մասնակցել են Բերլինի դաշնագրի կազմութեան մէջ, և ինչի թիւրքերն չի սկսի առաջադրել իր իրաւունքնե-րը, ոչ մի պետութիւն առանձին զինուորված մի-ջամտութեան իրաւունք չունի, և ոչ էլ իրաւունք ունի հաստատելու իր հովանաւորութիւնը Բալ-կանեան թերակղզու վրա: Բալկանեան թերա-կղզու արեւելեան կամ արեւմտեան կողմի վրա հո-վանաւորութեան սահմանափակութիւնն վերաբե-րում է Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի մէջ ոչինչ համաձայնութիւն գոյութիւն չունի: Տիսսա ասաց, որ Աւստրո-Ունգարիայի արտաքին գործե-րի միմիայնութիւնը առաջուց չը գիտէր էլ իշ-խան Ալեքսանդրի գահադուրկ լինելու մասին, և որ Աւստրո-Ունգարիան իր վրա պարտաւորու-թիւն չէ ընդունել աջակցելու ռուսաց կանդիդա-տին Բողբալայի գահի համար:

ՍՈՖԻԱ, 19 սեպտեմբեր: Համաձայն բարձր

կառավարի պահանջի, վճռված է վերացնել Բոլ-գարիայի պաշարման դրութիւնը: Կառավարու-թիւնը պատրաստ է յետաձգել ընտրութիւնները: Գիտարութիւններ են ծագել յեղափոխութեան մասնակցողներին ազատելու խնդրի մէջ:

Պետերբուրգ, 20 սեպտեմբեր: Մաքսային տուրքերի բաժինը կարգադրութիւն արաւ ան-պայման արգելելու աւստրիական սահմանադրի վրայով հին շրջերի և լաթերի ներմուծումը: Սար-դինիայում խօշորայի երկալու պատճառով, Օգէս-տայի գնեւորաւ-նահանգապետ հրամայեց զօրծաղ-րել կարանտինային միջոցները և այն նաւերի վե-րաբերմամբ, որոնք գալիս են յիշեալ կղզուց: Վարդիփոստով սեպտեմբերի 14-ից մինչև 18-ը խօշորայով հիւանդացողներին թիւը 5 հոգի էր, որոնցից 4 հոգի մեռան: Մնացին 4 ուսու և 8 կօրէացի հիւանդներ: Պէշտում տարափոխիկ ախտը նուազում է, վերջին օրը այդտեղ հիւանդացան 16 և մեռան 5 հոգի:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 20 սեպտեմբեր: Երէկ այստե-ղից հեռացաւ յունաց թագաւորական զօրքը:

ՍՈՖԻԱ, 20 սեպտեմբեր: Միմիայնութիւն խոր-հուրդը մի պատգամաւորութեան միջնորդութեամբ, որ բաղկացած էր Նալոյի, Ստոյիլի, Գէշօյ, Բա-ռալայի, Նիկոլայի և Իվանովի պատգամաւորնե-րից, յայտնեց բարձր կառավարին, որ բողբալա-կան կառավարութիւնը հրաժարվեց Ալեքսանդր Բատուրինից բողբալական իշխանական գահի վրա ընտրելու մտքից:

ՎԻԵՆԱ, 20 սեպտեմբեր: «Morning Post» լրագիրը գուշակում է մի մեծ պատերազմ: Այդ առիթով պաշտօնական «Fremdenblatt» լրագիրը ասում է որ ոչ ոք Եւրոպայում, ոչ Բերլինում, ոչ Վիեննայում, ոչ էլ Պետերբուրգում պատերազմ չեն ցանկանում: Միմիայն միջոցներ են որոնում խաղաղ վախճան տալ բողբալական գործին:

Պետերբուրգ, 21 սեպտեմբեր: Րուս. Имба-лихт-ի մէջ հրատարակեցաւ Բարձրագոյն հաստատված պետական խորհրդի կարծիքը՝ Անգլիոյկաւ աղգաքնակութեան և Թիւրքի ու Կուբանի օկրուգների ալաղգիների զինուորական ծառայութեան ենթարկելու համար: Մահմուտ-կան դաւանութեան պատկանողների համար կար-գադրած է զինուորական ծառայութիւնը փոխա-րինել ժամանակաւոր դրամական տուրքով: Զին-ւորագրութիւնը մտցնվելով 1887 թվականից, յե-տաձգվում է մինչև 1889 թվականը հետեւալ տեղերում. Բաթումի, Արդուինի և Սուխումի (քաղի դրա Ոկումի գաւառամասից) օկրուգներում, Կարսի շրջանում և Զինուորական օկրուգում:

ՎԻԵՆԱ, 21 սեպտեմբեր: Երէկ հասաւ այս-տեղ Սերբիայի թագաւորը, և փոխարինելով այ-ցելութեամբ Աւստրիայի կայսրի հետ, ներկայ ե-ղաւ պալատում ի պատիւ իրան պարտաստած հանդիսաւոր ճաշին:

ՄԱՌԻԻ, 21 սեպտեմբեր: Վերջին զինուո-րական ապստամբութեան զլուս բերողները՝ գե-ներալ Վիլլիամպի, լէյտենանտ Սերբանօ և հինգ էլ ունեւոր-օֆիցէրներ՝ դատապարտվեցան մահ-վան պատժի:

ՍՈՖԻԱ, 21 սեպտեմբեր: Բողբալայի պա-շարման դրութիւնը վերացվեցաւ:

ԺՈՒՐԺԵՎ, 21 սեպտեմբեր: Շուտայի բեր-դապահ զօրքը, որը բաղկացած է երեք գնդից, երէկ ուղարկեց Սօֆիա, պատերազմական միմի-տրութեան հետեւալ հեռագիրը: «Ուշադրութեան առնելով ներկայ անցքերը, և համազօրվելով որ Ժո-ղովրդի իրաւունքները և երկրի շահերը անդա-դար վնասվում են իրերի ներկայ դրութիւնից, բերդապահ զօրքը, կամենալով զերծ պահել հա-րկինքը զԺողովրդից, ցանկանում է, որ օգոս-տոսի 9-ի պետական յեղափոխութեան բոլոր մաս-նակցողները ազատվեն և որ հարկաւոր ուշա-դրութիւնը դարձնի զհինգալ Կառլաւոր 15-ի յայտագրի վրա եղբայրակից երկու ժողովրդների մէջ բաժանունը չը գցելու համար. հակառակ դէպ-քում բերդապահ զօրքը իրան ազատ կը համարի վարվել այնպէս, ինչպէս ինքը բարեւ կը համա-րի: Այդ հեռագիրն ստորագրել են գնդերի երեք հրամանատարները. Թոքաւոր, Գիլիօլ և Լուդա-կատով: Շուտայի բերդապահ զօրքի օրինակին, հաւանական է, որ շուտով կը հետեւն ուրիշ շատ բերդապահ զօրադնդեր:

ՍՈՖԻԱ, 21 սեպտեմբեր: Բարձր կառավարա-յայտնեց բողբալական կառավարութեանը, որ ի-րան յանձնած երէկվայ յայտագրի բովանդակու-թիւնը բաւական պարզ չէ և որ նա կը կամենա-ր ստանալ այսօր վերջնական պատասխան մեծ Ժո-ղովի համար ընտրութիւնների վերաբերմամբ և

